ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳԵՂԱՆԻՍՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Շիրակի մարզ գ. Գեղանիստ

<<23>> ապրիլի 2013թ.

1430 /

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ֆ. ՅՈԼԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Յոլակյան

Ի պատասխան Ձեր 2013 թվականի ապրիլի 4-ի թիվ 02.2/1457-13 գրության, հայտնում ենք, որ <<Գեղանիստի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության անշարժ գույքի զբաղեցրած, ինչպես նաև դրա սպասարկման և օգտագործման համար անհրաժեշտ համայնքի սեփականություն հանդիսացող 1.72 հա հողամասից 1.2 հա-ն Գեղանիստ համայնքի ավագանու 2013թվականի ապրիլի 18-ի թիվ 9-Ա որոշմամբ նվիրաբերվել է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության, իսկ 0.52 հա հողամասը թողնել համայնքային սեփականություն՝ բարերարի կողմից համայնքում մանկապարտեզ և կից խաղահրապարակ կառուցելու համար:

Կից ներկայացվում է ավագանու նշված որոշումը:

Հարգանքով՝ Ա. Ղազարյան

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 3190-13
23. 04 13թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳԵՂԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 9-Ա

18 - ապրիլի 2013 թվական գ.. Գեղանիստ

Պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի զբաղեցրած Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստ գյուղական համայնքի սեփականություն համարվող 1.72 հա հողամասը Հայաստանի Հանրապետությանը նվիրելու մասին

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստ համայնքի ավագանին

Որոշում է

Համայնքի ղեկավարի առաջարկությամբ պետական սեփականություն հանդիսացող <<Գեղանիստի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության անշարժ գույքի զբաղեցրած, ինչպես նաև դրանց սպասարկման և օգտագործման համար անհրաժեշտ Գեղանիստ համայնքի սեփականությունը հանդիսացող 1.72հա հողամասից 1.2հա հողամասը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության, իսկ 0.52հա թողնել համայնքային սեփականություն բարեարի կողմից մանկապարտեզ և կից խաղահրապարակ կառուցելու համար:

Համայնքի ավագանու անդամներ՝

Ասլանյան Զորիկ	կողմ	
Բեյրության Արտակ	կողմ	
Գրիգորյան Շահեն	կողմ	
Բաղդասարյան Սողոմոն	կողմ	
Ղազարյան Սահակ	կողմ	

Գեղանիստ համայնքի ղեկավար Ա. Ղազարյան

23 հունվարի 2013թ.
գ. Գեղանիստ